

ՄԱՀ
Տ. ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՔԵԼԱՄՅԱՆԻ
(1919—1980)

1980 թ. հուլիսի 25-ին մահացավ Շիրակի թեմի՝ Լենինականի Ս. Աստվածածին (Ցոթվերք) առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Կարապետ ավագ քհն. Քելամյանը:

Հանգուցյալը ծնվել է 1919 թ. Մուսա Լեռան Հաճի-Հաբեբլի գյուղում, քահանայի ընտանիքում: Սովորել և ավարտել է տեղի ծխական դպրոցը և վաղ հասակից հաճախել գյուղի եկեղեցի՝ մասնակցելով ամենօրյա ժամերգություններին:

Պատանի Կարապետը (ավազանի անուն) 1935 թ. տեղափոխվում է Բեյրութ: 1946 թ. բազում հայրենադարձների հետ Կարապետ Քելամյանի ընտանիքը ևս ներգաղթում է մայր հայրենիք և մշտական բնակություն հաստատում Լենինական քաղաքում:

1957 թ. մարտի 17-ին Մայր տաճարի լուսարարապետ Տ. Սահակ արքեպ. Տեր-Հովհաննիսյանից ձեռնադրվում է քահանա:

Հանգուցյալը մինչև իր կյանքի վերջը ծառայում է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում, որպես հոգևոր հովիվ:

Նա սիրված է եղել ինչպես իր հոտի, այնպես էլ Շիրակի թեմի առաջնորդների, եկեղեցական խորհրդի ու քահանայից դասի կողմից:

Որպես գնահատանք իր երկարամյա ծառայության 1964 թվականից նա իրավունք է ստանում քահանայական լանջախաչ և 1971-ից ծաղկյա փիլոն կրելու:

1976 թ. Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, գնահատելով Տ. Կարապետ քահանայի նվիրյալ ծառայությունը, նրան շնորհում է ավագության պատիվ:

Հանգուցյալի վերջին օծումը կատարվում է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում հուլիսի 27-ին, կիրակի օրը՝ ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանի:

Հանգի՜ստ տեր հոր ոսկորներին: